ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա Ր Ա Ր Ա Տ Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ԱՌ/35-2020

ք.Արտաշատ

„25„ 02 2020թ.

<<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 136 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<է>> ենթակետերով,68-րդ հոդվածի 6-րդ կետով ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի թիվ 133-Ա որոշման 8-րդ կետի՝

Որոշում եմ՝

1.<<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնանորոգված մասնաշենքերի՝ 2018 թվականի սեպտեմբերի 13-ին ավարտված աշխատանքների արժեքով ՝1586405718դրամով ավելացնել .<<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը ՝ լրացուցիչ թողարկելով և Հայաստանի Հանրապետության օգտին տեղաբաշխելով 31728 հասարակ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 50000 դրամ արժեքով:

2.Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2007թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 136 որոշմամբ հաստատաված .<<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<Ընկերության կանոնադրական կապիտալը 1922105718 (մեկ միլիարդ ինը հարյուր քսաներկու միլիոն մեկ հարյուր հինգ հազար յոթ հարյուր տասնութ)դրամ, որը կազմում է 38442(երեսունութ հազար չորս հարյուր քառասուներկու) հատ

50000(հիսուն հազար) դրամ անվանական արժեքով հասարակ(սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 38442 բաժնետոմսերը տեղաբաշխված են , սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են>>:

3.Հանձնարարել .<<Արտաշատի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

25.02.2020

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ.ՍԱՐԳՍՅԱՆ